Հայ ոմն երիտասարդ յառաջ քան զէ ամ ի հարկէ տաճկացեալ, նաև ծառայ լեալ արքայի ամս ինչ, և ապա ի խղճմտանս եկեալ՝ ելեալ դիմէ ի Ֆռանկստան, և անդ ասեն նմա եթէ Ո՛ւր կորուսեալ իցես զհաւատդ՝ պարտ է քեզ անդ գտանել: Եւ ելեալ անտի դառնայ ի քաղաքս, և նստեալ աւուրս ինչ ընդ դրացիս և ընդ ծանօթս և ընդ եղբարս իւր և մեր զգեօտիւ շրջագայի յաւուրս Սուրբ Խաչին տօնի Վերացման և ասեն հաղորդիլ զնմանէ: Եւ տեսեալ Տաճկաց զայն՝ տան ծանօթութիւն նմա, և նա ասէ. Այո՛ ես եմ. ընդ որ բարկացեալ կալան զնա յետ աւուրց չորից Սուրբ Խաչին և տարան յանդիման դայմախամին. և նա սպառնալեօք ոչ կարաց դարձուցանել կրկին յօրէնս նոցա, քանզի նա պատասխանէր թէ Կորուսի միանգամ զհաւատս իմ և հազիւ գտայ, կամիք այժմիկ կրկին որոշել, զոր անհնար է թէ ուրացայց ըզՔրիստոս. զոր լուեալ՝ խսկոյն հրամայեաց կախել զնա ի դուռն պարսպին, որ ասի Պարտիզաց, յեզերս ծովու ի հիւսիսակողմն արևելեան: Եւ այգուցն ժողովեալ արք քրիստոսասէրք բառնալ զնա եւ թաղել պատուով ըստ օրինի ձեռամբ սուպաշուն: Եւ տեսեալ Տաճկաց զժողովս բազումս հաւաքելոցն, որք ողջագուրէին և զրկափարէին եւ դառնային ի վերայ նորա յոյժ յոյժ, յայնժամ զչարացեալ ծանուցին փաշային, որ և լի ցասմամբ ասաց սուպաշուն՝ կապել ի քար զպարանոցէ, եւ արկին ի ծով եւ Հայք առին ի փախուստ:

Յետ և աւուրց (դոբաղ) պուչաղճի ոմն ուրացող յազգէ մերում գնացեալ թէ Հաւատ ձեր ոչ է հաւատ, զի ստրջացայ ի ձէնջ և յօրինաց ձերոց, և իմս է հաւատ զոր նախ ուրացեալ եմ: Եւ ահացուցեալ զնա ի տիւանի անդ և ոչ կասեցաւ: Յայնժամ տարեալ